ՊԱՊԵՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՎ

Արցախցին բարձունքների վրա տուն է շինել, գյուղ է հիմնել, սարալանջերին ծառ է տնկել, այգի գցել, դաշտավայրում ցորեն ցանել, տան հացը առատ պահել: Արցախցին դաշտում տուն կառուցելը մեղք է համարել· չէ՞ որ հողը նրա սնողն է եղել: Գուցե հենց դրա համար է, որ Արցախի բոլոր գյուղերը բարձունքների, սարալանջերի վրա են:

Սակայն ժամանակը իր դրոշմն է թողել դարերից եկող այդ սովորության վրա: Միայն վերջին երկու տասնամյակում զգալիորեն ձևափոխվել է մեր պապենական հողերի քարտեզը: Դաշտավայրերում, ուր մի ժամանակ միայն հացահատիկ էին ցանում, վերադասի հրահանգով ժամանակին տեղ տրվեց արդյունաբերական նշանակություն ունեցող խաղողի այգիներին: Մոռացվեցին սարալանջերում փոված այգիները: Անուշադրության մատնվեցին, որովհետև անջրդի էին, ցածր էր բերքատվությունը. մեկ հեկտարից՝ ընդամենը 70—80 ցենտներ խաղող, այն դեպքում, երբ հարթավայրերի ոռոգվող այգիների մեկ հեկտարից ստացվում է 250—300 ցենտներ, իսկ առանձին հեկտարներից՝ նույնիսկ 400 ցենտներ խաղող:

Այսօր Արցախ աշխարհում սկսվել է ճիշտ հակառակ պրոցեսը: Արդյունաբերական խաղողատեսակները հետին պլան են մղվում, իրենց տեղը զիջում անուշահամ խաղողին, սեղանի տեսակներին: Առաջիկա մեկ-երկու տարում մարզի խաղողագործական տնտեսություններում սեղանի տեսակների տարածքը կհասցվի մինչև 5 հազար հեկտարի, որը կկազմի մարզի խաղողի այգիների ընդհանուր տարածքի 40 տոկոսը:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)